ՀՏԴ:929:947.925 Թարփոշյան

Doi:10.54503/0135-0536-2025.1-242

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՐԱՊԵՏ ԹԱԴԵՎՈՍԻ ԹԱՐՓՈՇՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ*

Հայ կամավորական շարժման մասնակից, թալինաբնակ Կարապետ Թադևոսի Թարփոշյանի հուշերը տեղեկություններ են հաղորդում ոչ միայն մարտական գործողությունների, այլև հայ գյուղացու առօրյայի, նրա աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Հուշագիրը ծանր մանկություն է ունեցել. 1898 թ. մահանում են մայրն ու երկու եղբայրները, և Կ. Թարփոշյանը հարկադրված է եղել փոքր հասակից աշխատել տարբեր ասպարեզներում՝ հոտաղից մինչև ծառա: 23 տարեկանում անդամագրվել է Դրաստամատ Կանայանի II կամավորական խմբում, որի կազմում 1914–1916 թթ. մասնակցել է Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած մարտական տարբեր գործողություններին:

Հուշերում Կ. Թարփոշյանը հիշատակում է ժամանակի ազգային-ազատագրական գործիչներին և կամավորական խմբերի հրամանատարներին՝ Անդրանիկին, Նժդեհին, Խեչոյին, Դալի Ղազարին, Թ. Նազարբեկյանին և այլոց: Մարտերի ընթացքում երկու անգամ վիրավորվել է: Ռուսական հրամանատարության կողմից նա պարգևատրվել է Գեորգիևյան IV աստիճանի խաչով ու մեդալով: Ապաքինվելուց հետո կրկին մեկնել է ռազմաճակատ, որտեղ մարտնչել է մինչև 1916 թ.: Թարփոշյանն ականատես է եղել Թուրք-քրդական վայրագություններին՝ արևմտահայության ցեղասպանության բազմաթիվ դեպքերի: Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հետո շարունակել է ծառայությունը բանակում, իսկ 1920 թ. մասնակցել է բոլշևիկյան մայիսյան խռովությանը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո ծառայել է Կարմիր բանակում, 1921 թ.՝ բոլշևիկյան 11-րդ բանակի զորամասերի հետ մասնակցել Վրաստանի խորհրդայնացմանը, ապա՝ Լեռնահայաստանի դեմ մղված մարտերին: Մինչև 1922 թ. ծառայել է Հայկական I հեծյալ գնդում, իսկ զորացրվելուց հետո՝ 1922 թ. միլիցիայում, ապա՝ Լենինականի (Գյումրի) մաքսատանը և այլ աշխատավայրերում: Կ. Թարփոշյանի կենսագրության վերաբերյալ հետագա տեղեկությունները, ցավոք, բացակայում են:

Հրապարակվող փաստաթուղթը բաղկացած է ձեռագիր և մեքենագիր 17 թերթից: Թերթ 1–7-ը մեքենագիր են, իսկ 8–17-ը՝ ձեռագիր: Ձեռագիրն անթվակիր է, իսկ մեքենագիրը թվագրված է՝ 25. IX. 1963 թ.: Մեքենագիր հատվածում, որը տրված է շեղատառով, լրացրել ենք ձեռագրում չնշված, բաց թողնված տեղեկությունները՝ պահպանելով ժամանակագրությունը: Հուշերը հրապարակվում են ընագրին հարազատ՝ առանց ոճական ու լեզվական էական փոփոխությունների՝ կատարելով միայն ուղղագրական և կետադրական որոշ շտկումներ: Ուղղահայաց փակագծերով կատարել ենք անհրաժեշտ հավելումները:

---

* *Ներկայացվել է 09. IX. 2024 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:*

Փաստաթուղթը պահվում է Հայաստանի ազգային արխիվի «Փաստաթղթերի հավաքածու հայ ազատագրական շարժումների վերաբերյալ» ֆոնդում (ֆ. 402):

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԹԱՐՓՈՇՅԱՆ ԹԱԴԵՎՈՍԻ ԿՅԱՆՔԸ

25 սեպտեմբերի 1963 թ.
[Ք. Թպլին]

Ես ծնվել եմ 1891 թ. Թպլինի շրջանի Աղյաման[1] (այժմ՝ Գառնահովիտ) գյուղում, չքավոր գյուղացու ընտանիքում: Մայրս՝ Սոֆյա Կարապետի Թարփոշյան: Հայրս՝ Թադևոս Վարդանի Թարփոշյան: Ընտանիքի անդրանիկ որդին ես եմ, և [ունեցել եմ] 2 եղբայր: Կրտսեր եղբայրս Աղասին է, և փոքրը՝ Հարությունը:

1898 թվականը աղետի տարի եղավ մեր ընտանիքի համար. մահացավ մայրս և նրա հետ 2 եղբայրներս հիվանդության պատճառով: Սակայն մենք չմացանք, [թե] նրանց հիվանդությունը ինչ էր: Տանը մնացինք ես ու հայրս 2 հորեղբայրներիս հետ: Մեկը ամուսնացած էր, իսկ մյուսը՝ ամուրի: Հայրս և հորեղբայրներս զբաղվում էին հողագործությամբ, իսկ մեծ հորեղբորս կինը տանը զբաղվում էր տնտեսության հոգսերով, իսկ ես՝ փոքրիկս, արածացնում էի մեր գառները և հորթերը:

Շուտով հայրս ամուսնացավ, և ես նորից ունեցա մայր, որը չնայած իմ մայրիկին նման չէր, բայց սիրում էր ինձ որպես գործունյա փոքրիկի և խնամում ու փայփայում էր:

10 տարեկան հասակում հայրս ինձ տվեց մեր գյուղի հարազատներից մեկի տանը՝ [որպես] հոտաղ, երբ մի օր Մատարայի Ս[ուրբ] Նախավկայի ուխտն էր, ես, հորեղբորս կնոջ և հարևանների հարսերի հետ, փախել էի ուխտի, վերադարձի ժամանակ խազեյինիս[2] տղան հանդիմանեց, թէ՝ «Ի՞նչ է, դու հոտաղ ես, թե՞ աղա, դու անասունները գոմում ես թողնում, թափառում»: Իսկ ես առանց խոսքին պատասխանելու հաջորդ օրը՝ առավոտյան, անասունը տարա դաշտ, թողեցի այնտեղ ու մեկնեցի Ալեքսանդրապոլ (Լենինական):

Ալեքսանդրապոլում իմ ազգականներից մեկը՝ Համբարձումը, ինձ ուղեկցեց[3] Համուսենց Գևորգի տունը՝ [որպես] նոքար[4]: Ամաններն էի լվանում, պղերը[5] մաքրում, շուկա պրավիզի[6] գնում և ամսական վաստակում էի 3–5 ռ[ուբլ]ի փող, որն ուղարկում էի տուն՝ հորս և մորս:

---

[1] *Գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում: 1946 թ. վերանվանվել է Գառնահովիտ:*
[2] *Տիրոջ:*
[3] *Տեղավորեց ծառայության:*
[4] *Ծառա:*
[5] *Հատակ:*
[6] *Պարեն, մթերք, պաշար:*

2 տարի մնալուց հետո, որպես լավ աչքաբաց և աղնիվ ծառայողի, ինձ ուղարկեցին Ղարս՝ իրենց աղջկա տունը ծառայության նոքարի պաշտոնով: Նոր գնալուց շատ նեղություններ քաշեցի նոր շրջապատին ծանոթանալու և հարմարվելու համար: 2 տարի հետո տեղափոխվեցի Երևան, այնտեղ ծանոթացա մի տերտերի հետ, որը վերցրեց իր մոտ [որպես] տանը ծառայող: Անցավ ևս կյանքիս մեկ տարին: Այնուհետև ծառայեցի ալեքսանդրապոլցի փեչնիկ[7] Հակոբի մոտը: Երկու տարի աշխատելուց հետո նորից տեղափոխվեցի Ամանեսովենց Սմբատի տունը ծառայելու, որտեղ մնացի նորից 2 տարի: Այսպես անցկացրի իմ կյանքի 23 տարին:

1914 թվին[8] հայտարարվեց Համաշխարհային պատերազմը: Սկսեցին [սկսվեց] կամավորների մեկնումը պատերազմ[9]: Ես էլ՝ [որպես] տաքարյուն երիտասարդ, [անդամա]գրվեցի կամավոր Իգդիրի [տեղակայված] Հայոց II խմբում[10], որի ղեկավարն էր Սուրենը՝ Դրոն (Դրաստամատ): Մի քանի շաբաթ մարզվելուց հետո անցանք կռվի: Մեր բանակի թիվը կազմում էր 500 հոգի: [Մեր] խմբապետն էր դավալվեցի Դավիթ բեկի տղա Խոսրովը: Մյուս խմբապետներն էին՝ Դալի Ղազարը[11], Յապոնը[12], Զեմլյակը[13], Նժդեհը[14], Քաչալ Ղազարը[15], Մարտիրոսը[16] և ուրիշները:

---

[7] *Վառարանագործ:*

[8] *Հուլիսի 19-ին (նոր տոմարով՝ օգոստոսի 1-ին):*

[9] *Կովկասի իշխանությունը կամավորական ստորաբաժանումների կազմակերպման գործընթացը սկսում է 1914 թ. հուլիսի 30-ին, երբ Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչը հայտարարում է կամավորներ ընդունելու կայսր Նիկոլայ II-ի հրամանագրի մասին [տե՛ս* «Кавказ» (Тифлис), 02. VIII. 1914]*:*

[10] *Հայ կամավորական ստորաբաժանումները հայտնի էին բանակ, գունդ և խումբ անուններով: Պաշտոնական գրագրությունում կոչվում էին դրուժինա:*

[11] *Միքայել Բաղալքյոխյան (Դալի Ղազար, 1886–1920) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, II խմբի վաշտի հրամանատար: Մասնակցել է Սարդարապատի հերոսամարտին (1918 թ. մայիս):*

[12] *Հովհաննես Պարոնյան (Յապոն, 1878–1942) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Մասնակցել է հայ-թաթարական կռիվներին (1905–1906 թթ.), Հայկական II վաշտի հրամանատար: Սյունիքի ինքնապաշտպանության (1919–1921 թթ.) և Փետրվարյան ապստամբության մասնակից (1921 թ.):*

[13] *Հարություն Նանումյան (Զեմլյակ, ? –1918) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Կամավորական II խմբի հեծելախմբի պետ: Պարգևատրվել է Գեորգիևյան IV, III և II աստիճանի խաչերով: Զոհվել է 1918 թ. մայիսի 28-ին Բաշ-Ապարանի ճակատամարտում:*

[14] *Գարեգին Տեր-Հարությունյան (Նժդեհ, 1886–1955) – ազատագրական շարժման, ռազմական և պետական ականավոր գործիչ, Առաջին Բալկանյան պատերազմի մասնակից, Հայկական վաշտի հրամանատար (25. IX. 1912 – 17. V. 1913), Կամավորական շարժման 1918 թ. մայիսին Ղարաքիլիսայի (Վանաձորի) ճակատամարտի մասնակից, 1919–1921 թթ. Զանգեզուրի (Սյունիքի) պաշտպանության ղեկավար:*

[15] *Քոչարյան Ղազար (Քաչալ Ղազար, 1874–1965) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Գողթն գավառի և Լեռնահայաստանի գոյամարտի մասնակից (1919–1920):*

[16] *Մարտիրոս Աբրահամյան (Բաշգառնեցի Մարտիրոս, 1885–1957) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, Հայ-թաթարական կռիվների մասնակից, Հայկական II խմբի վաշտի հրամանատար (1914–1916), Բաշ-Ապարանի ճակատամարտի*

Սկսվեց մեր շարժումը դեպի առաջ՝ Թուրքերի դեմ, անցանք Արծափ գյուղը, այնտեղից՝ Ղզլդիզա, արյունալի մարտերով, որտեղից մեր ճանապարհը բաժանվեց դեպի Վանա գիծը: Երբ անցանք գիշերով Գյավրեշամեն[17], արդեն ձյունը մեկ մետրի չափ դրել էր: Մեզ հետ էին կազակները, որոնք հետ մնացին: Գիշերով Գյավրեշամեում մեր վաշտը անցավ հարձակման աջ թևով Թադուրա քոի[18] բերանը, իսկ Դալի Ղազարինը՝ ձախ թևը, Քաչալ Ղազարի վաշտը գյուղի չորս կողմը ցրվեց, և դիրքեր բռնեցին մնացած 2 վաշտերը: Հեծելազորային էին Յապոնն ու Զեմլյակը[19], որոնք [ուղղվեցին] Վանա ճանապարհի վերին մաս:

Լուսածագին, երբ ես պոստի[20] էի, 2 քուրդ եկան մեր կողմը, ձերբակալեցինք նրանց և լուր հասցրինք Դրոյին: Պատասխանը եղավ՝ «Ոչնչացնե՛լ, նե՛րս չթողնել»: Հրամանը կատարված էր:

Հերթափոխության ժամանակ նախաճաշում էինք, իսկ հերթապահում էին 2 հոգի միայն: Սկսվեց քրդերի հարձակումը գյուղի վրա, իսկ գյուղի բնակիչները լրիվ փախել էին, սարեր բարձրացել: Դրոն հրամայեց հարձակման անցնել. մինչև երեկո կռիվը շարունակվում էր: Երեկոյան նրանց [քրդերին] լրացնելու եկան 3 [համիդեական] ալայի[21] զորք, որոնց ղեկավարներն էին Քոռ Հասան փաշեն [փաշայի] ալայը և Մամեդե Լակզիի ալայը: Ղազարի զորքի գնդակներից սպանվեց Մամեդե Լակզին: Նրա [Մամեդե Լակզիի] վաշտը ուզեց շրջանցման անցնել և ջախջախեր Յապոնի ու Մարտիրոսի վաշտ[եր]ը, բայց տեղնուտեղը ջախջախվեցին Խոսրովի և Ղազարի վաշտ[եր]ի կողմից: Այստեղ վիրավորվեց Դրոն[22]: Սպանվածներ չեղան, իսկ վիրավորները շատ քիչ էին: Դրոն նամակ գրեց կազակներին օգնական ուժ ուղարկելու, բայց չհասավ այդ օգնությունը՝ պատճառաբանելով, որ հրաման չունեն առաջ շարժվելու:

Գիշերը, երբ թուրքը համալրվեց, մենք [հարկադրված] հետ նահանջեցինք դեպի Ղզլդիզա: Դրոյին և մնացած վիրավորները ուղարկվեցին Իգդիր, իսկ նրա տեղը մնաց Խեչոն[23]: Մեզ տարան Ալաշկերտի ուղղությամբ: Գիշերելով Ուչքիլիսայի[24] վանքում՝ առավոտյան շարժվեցինք Մանգասար, այնտեղից էլ՝ Դարաքիլիսա: 2 օր այնտեղ հանգստանալուց հետո շարժվեցինք Զլկան, որտեղից

1918, մայիս), թուրք-հայկական պատերազմի (1920 թ.), Փետրվարյան ապստամբության և Սյունիքի ինքնապաշտպանության մասնակից (1921 թ.):

[17] Գյավրի Շամե:

[18] Քռա՝ քարակույտ, քարաժայռ:

[19] Նկատի ունի երկու հրամանատարների հեծյալ խմբերը:

[20] Ժամապահ:

[21] Գունդ:

[22] Դրոն վիրավորվում է 1914 թ. հոկտեմբերի 30-ին: Ռուս սպա, կազակ Ֆ. Ելիսեևը գրում է. «Այդ ժամանակ վիրավորվեց Դրոն, որը համարվում էր բոլորից քաջը: Մենք նրան պատվով ուղարկեցինք Իգդիր՝ ապաքինվելու» (տե՛ս Ф. И. Елисеев. Казаки на Кавказском фронте 1914–1917. Записки полковника Кубанского казачьего войска в тринадцати брошюрах-тетрадях. М., 2001, с. 85)*:*

[23] Խաչատուր Ամիրյան-Գևորգյան (Դաշնակցական Խեչո, Խեչո, 1872–1915) – ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, մասնակցել է կամավորական շարժմանը, 1915 թ. ապրիլի 1-ից Արարատյան գնդի հրամանատարի օգնական (տեղակալ), առաջապահ-հետախուզական հեծելավաշտի հրամանատար, որն առաջինն է Վան մտել:

[24] Սբ Հովհաննես:

հարձակվեցինք Ղլիճ Գետուկ[25], անցանք դեպի Դերիկ գյուղը, այնտեղ էլ գիշերեցինք:

Մեր շարժման 5-րդ օրը մարտերով առաջ գնացինք Կունդին գյուղը, այստեղ [բնակավայրը] գրավելուց հետո բարձրացանք սարերը, սպանվեցին մեզանից մի քանիսը, իսկ ես վիրավորվեցի ձախ ուսիս գլխից, վերքը անվնաս էր. մի տեղ էր ծակված[26]: Հաջորդ օրը վերքս կապած նորից հարձակման էինք անցնում: Մի քանի օր հետո նահանջեցինք Ալաշկերտից մինչև Իգդիր[27], որտեղից մեզ բերեցին Քանաքեռ: Մի քանի օր հանգստանալուց հետո մեր խումբը ավելացավ[28]: Մանևրայի[29] ժամանակ աշակերտները գնում էին տուն Երևանից: [Զորախաղի ժամանակ] ես հագնվեցի [զգեստափոխվեցի հագնելով] աշակերտներից մեկի շորերը[30] և հետախուզեցի դիմացի զորքին, իմանալով տեղը՝ հարձակվեցինք, իսկ նրանք հանձնվեցին: Իմ խիզախության համար Դրոն պարգևատրեց դրամով, և գովասանքով էին խոսում իմ հետախուզության մասին:

Մի քանի օրից հետո շարժվեցինք դեպի Էջմիածին[31], ինձ տրվեց հետախույզ կամանդ[32] Խոսրովի վաշտը. դարձանք հետիոտից հետախույզ կամանդ, որտեղ պատվով ծառայեցի ես հայրենիքի պաշտպանության համար[33]:

Էջմիածնում մեզ դիմավորեցին ուրախ, սեղաններով, գյոլի[34] մոտ ճաշկերույթ տվեցին: Այնուհետև նորից շարժվեցինք դեպի Իգդիր. այսպիսով, լրացավ պատերազմական կյանքի մեկ տարին:

1915 թվականի գարնանը [Արարատյան գունդը] շարժվեցինք դեպի Գյավրեշամեյի լեռները, այնտեղից էլ՝ Բերկրիկալա[35] [տանող] դժվար անդնդախոր ճանապարհներով: Բերկրիկալայում թուրքերն ու քրդերը մեր աջ կողմն ու դիմացի կարմունջում [կամուրջում] դիրքավորվել էին: Մեր վաշտը, առաջինը լինելով, ստանում էինք հարված 2 կողմից, թույլ չէին տալիս կամուրջը անցնել:

---

[25] *Խլիճ:*

[26] *Խմբի կորուստը կազմել է 12 սպանված և 18 վիրավոր (տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. հ. ԺԱ, Պէյրութ–Յունուար, 2015, էջ 169):*

[27] *Սարիղամիշյան գործողությունից հետ հայ կամավորական խմբերը ուղարկվեցին թիկունք՝ հանգստի և համալրման նպատակով:*

[28] *1915 թ. ապրիլի 1-ին կազմավորվում է Արարատյան գունդը: Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) V գնդի մարտիկները լրացնում են II, III և IV խմբերի անձնակազմերը: Գունդը գործելու էր ռուսական Բայազետի ջոկատի կազմում:*

[29] *Զորախաղերի:*

[30] *Այսինքն՝ ծպտվեց, քողարկվեց աշակերտական համազգեստով:*

[31] *Վաղարշապատ:*

[32] *Ստորաբաժանում:*

[33] *Ռուսական հրամանատարությունը բարձր է գնահատում հայ կամավորների և, հատկապես, II խմբի մարտական գործողությունները: Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Ի. Օգանովսկին առաջարկում է հիմնել ոչ միայն պահեստազոր, «այլև հաստատել հայ սպաների դպրոց, ուր շտաբի սպաների ղեկավարության տակ պատրաստուելու են մեր խմբերի համար սպաներ» (տե՛ս Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. հ. ԺԱ, էջ 166):*

[34] *Նկատի ունի ունի Էջմիածնի լճակը:*

[35] *Բերկրիկալե, Բերկրի:*

Իսկ մենք, «ուռա՜» կանչելով, կարմուջը [կամուրջը] գրոհեցինք և բարձրացանք լեռը՝ թողնելով սպանվածների և վիրավորների բավական թիվ:

Գրավեցինք Բերկրիկալա բերդը:

Խոսրովի հրամանով քոչվորների դեմը կտրելու, հետ դարձնելու համար դուրս եկանք ես ու իմ 4 ընկերները: Այստեղ թուրքական մի մարդ հրացանը դեմ արած կրծքիս ուզում էր խփեր, իսկ ես ճարպկորեն խփ[եց]ի իրեն, ձիուն և վերցրեցի հրացանը ու իր հրացանով իրեն սպանեցի, և մնացածներն էլ հնազանդորեն [առանց որևէ դիմադրության] հետ դարձան: Մենք նորից գրավեցինք մեր դիրքերը: Վանա ծովի Ալջավազի[36] մյուս կողմից սկսեցինք հարձակումը, իսկ Համազասպի[37] խումբը օգնության հասավ մեզ աջ կողմից ծովի կողքով, [և] թուրքերին միացյալ ուժերով հետ շպրտեցինք: Մեզանից 5 հոգուց մեկը խփվեց, իսկ մնացած չորսիս Խոսրովը հետ բերեց Բեկի քյոշկեն[38]: Քեռու խումբը հաջորդ օրը Պարսկաստանից եկավ[39], միացավ մեզ, շարժվեցինք դեպի Վան: Տիրամոր վանքում մենք տեսանք մարդկանց դիակների կույտեր այլանդակված: Հետախուզության ժամանակ իմ աչքերի առաջ [առջև] երևում էր [էին] հայ մայրեր՝ երեխաները կրծքներին խփած, այլանդակված մարդիկ, ոմանց ստինքներն էր կտրված, ոմանց՝ քիթն ու ականջները, ոմանց՝ ձեռքն ու ոտքը և այլ այլանդակություններ, որը կատարել էր թուրքի բաշիբոզուկները: Տները նման էին ավերակների թալանված: Ես Խոսրովին ցույց տվի այդ բոլորը՝ [ասելով], որ մեզ թույլ չեք տալիս նույնիսկ թուրքի սպանել, իսկ այս բարբարոսները ի՞նչ են արել՝ վարդապետին վառել էին, մի լաթ էլ վզից կապած գցել էին եկեղեցու դռների վրա:

Իրիկնադեմին 8 հոգով գնացինք հետախուզության դեպի Խանասորի դաշտը: Մեզանից մեկը լավ էր իմանում քրդերեն խոսել, [իսկ] հակառակ կողմից 3 քուրդ եկել էին հետախուզության: Մեր քրդախոս ընկերը նրանց կանչեց՝ քուրդ ձևանալով: Նրանք եկան հանձնվելու, մեկն սպանվեց, մյուսը փախավ, մեկին բռնեցինք, բերինք տարանք [հանձնեցինք] Դրոյի մոտը, իմացանք Վանի կողոպտվելու[40] մասին և ամեն ինչ, որից հետո սպանեցինք: Մեր սուրհանդակները եկան և պատմեցին քուրդ հետախույզի մասին, որը թուրք է քրդացած, հայի արյուն է խմում: Իրիկվան մենք հասանք Վան, որտեղ ոչ մի կրակ, ոչ մի ճրագ չէր երևում: Վանում կիսամահ եղած ժողովուրդը հոգեդարձ եղավ:

Ամեն մի տանը [տուն] մի զինվոր ուղարկեցին, ինձ էլ մի վարսավիրի տուն ուղարկեցին: Լուսաբացին մենք պետք է դիմավորեինք Վանի ժողովրդի հետ

---

[36] *Արծկե:*

[37] *Գարեգին Սրվաճտյանց (Համազասպ, 1873–1921) – ազգային ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ, մասնակցել է հայ-թաթարական կռիվներին (1905–1906 թթ.), Հայկական III կամավորական խմբի հրամանատար, Բաքվի պաշտպանության մասնակից (1918 թ.): Դավադրաբար սպանվել է խորհրդային իշխանության կողմից (1921 թ.):*

[38] *Ապարանք, տաղավար:*

[39] *Պարսկաստանից եկել էր Անդրանիկի խումբը:*

[40] *Նկատի ունի 1915 թ. ապրիլի 7-ին սկսված Վանի Այգեստան ու Քաղաքամեջ թաղամասերի ինքնապաշտպանությունը: Թուրք-քրդական խառնամբոխը կողոպտել էր հայերի կողմից լքված տները:*

Քեռուն և Համազասպին: 2 հերոսներ, որոնք սպանվել էին, հանդիսավոր թաղում կատարվեց [թաղվեցին] Վանում: Վանի բնակիչները սրտաբաց, ծաղիկների փնջերով դիմավորեցին իրեն փրկարար հայ զորքին:

Մենք Վանում մնացինք 4–5 օր, ապա լուր ստացվեց, որ Շատախն ու Մոկսը պաշարված են. պետք է Դրոյի բանակը հասնի օգնության: Մեր բանակը հասավ Հայոց ձոր, մեր ռազմեդկի կամանդը շարժվեց Գյորան դաշտ, իսկ Դ[ալի] Ղազարի վաշտը Փեսանդաշտով անցավ Մոկս: Մնացած հետևակային զորքը մնաց Վանում: Գյորան դաշտը վերցնելու ժամանակ հակառակորդը փախավ, իսկ գյուղերի [հայ] բնակիչներն էլ ջարդվել էին: Հաջորդ օրը գնացինք Շատախ[41]: Անցանք Սպիտակով Շատախ: Շատախցիները ուրախ դիմավորեցին մեզ. տեղի քուրդ զորքերը փախել էին: 20 օր Շատախում մնացինք: Մեր բանակը Անդրանիկի[42] հետ անցել էր Աղթամարով Սորբի դիրքերը:

Սուրհանդակը հրաման բերեց, որ Անդրանիկը Դրոյին կանչում է իր մոտ, և մենք շարժվեցինք Մոկս, այստեղից էլ Փութկի Սուրբ Գևորգ[ում] գիշերելուց հետո՝ հաջորդ օրը, հասանք Աղթամար[43]: Այդտեղից էլ Խնձորիկի[44] վրա[յով] Քանա ձորի քերսը: Այստեղից [շարժվեցինք] Դատվան[45], 2 օր պատերազմից [մարտերից] հետո խլեցինք թուրքից դիրքերը: Նազարբեկովը[46] Վանա ծովի աջ կողմից հարձակում գործեց թուրքերի վրա:

Երեկոյան Անդրանիկը կարգադրեց, [որ] մեր զորքերը տեղավորվեն Դատվանի սարերի տակ: Մյուս օրը՝ լուսադեմին, սկսվեց հարձակումը: Թուրքական զորքերը ջախջախվեցին:

Հարձակման ժամանակամիջոցին Անդրանիկը գտնվում էր ամենաառաջին շարքերում: Նազարբեկովն էլ իր հերթին սկսեց հարձակումը: Թուրքական բանակի մի մասը ընկավ շրջապատման մեջ և գլխովին ջախջախվեց: Այդ գիշեր հրամանատարները խորհրդակցություն ունեցան, որտեղ որոշել էին, [որ] Անդրանիկի, Դրոյի և Նազարբեկովի զորամասերը շարժվեն Մուշի վրա, ապա՝ դեպի Սասուն, որից հետո շարժվել դեպի Տիգրանակերտ, իսկ Քեռին, Համազասպը և ռուսական բանակի գեներալ Զորնիզորովի[47] հետ պետք է շարժվեին Բիթլիսի[48]

---

[41] Գործողությունը կատարել է Հայկական II խումբը. 1915 թ. մայիսի 14-ին կամավորները հասել են Շատախ:

[42] Անդրանիկ Օզանյան (1865–1927) – ազատագրական շարժման ականավոր գործիչ, հայդուկապետ, ռուսական բանակի գեներալ-մայոր, Սասունի ապստամբության ղեկավար (1904 թ.), Հայկական I կամավորական խմբի (1914–1916 թթ.), երկրապահ գնդի հրամանատար (1917–1919 թթ.):

[43] Նկատի ունի Վանա լճի հարավային ափին գտնվող Ախավանքը: Այն Աղթամարի վանքի նավահանգիստն էր, որտեղ գտնվում էր Աղթամարի կաթողիկոսական վեհարանը:

[44] Խնձորգեն. գտնվում է Վանի նահանգի Կարճկանի գավառակում:

[45] Գտնվում է Բիթլիսի (Բաղեշի) գավառակում՝ Վանա լճի հարավարևմտյան եզրին:

[46] Թովմաս Նազարբեկյան (Նազարբեկով Ֆոմա, 1855–1931) – ռուսական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, Կովկասյան II հրաձգային բրիգադի, ապա դիվիզիայի պետ (1914–1916):

[47] Զեռնոզուբով Ֆյոդոր Գրիգորի (1863–1919) – ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, Կովկասյան 4-րդ կազակային դիվիզիայի հրամանատար (01.04–18.06.1915):

[48] Բաղեշ, որի գրավման համար ձևավորվել էր գեներալ Ի. Տրուխինի (1852–1922) հավաքական ջոկատը, որի կազմում էին Հայկական I, II, III և IV կամավորական խմբերը:

վրա և ապա գնացին միանալու Տիգրանակերտի գծում: Հաջորդ օրը մի նոր հրաման ստացվեց զորքերի հետ նահանջի մասին. թե ի՞նչ պատճառով տեղի ունեցավ նահանջը, մեզ հայտնի չէր: Սկսվեց մի ահավոր նահանջ: Վանի և մյուս շրջանների ողջ հայ բնակչությունը նահանջեց: Մեր գունդը եկավ հասավ Երևան, իսկ Անդրանիկը Պարսկաստանով վերադարձավ[49]: Նահանջի մասին պատմում էին, որ իբր թե հայկական դրոշակ[50] էին բարձրացրել Վանի բերդի վրա, որի մասին հաղորդել էին Նիկոլայ Նիկոլաևիչին[51], և վերջինս էլ հայերին բնաջնջելու համար Հայաստանն առանց հայերի ահավոր ծրագիր էր իրագործում:

2 օրում հայի գյուղերը մաքրեցինք, և սկսվեց նորից նահանջը: Մի մասը՝ Քեռին [ու] Համազասպը, Լիզի[52] վրայով [նահանջեցին] Տիգրանակերտ[53], մյուսներն էլ՝ Մուշից Սասուն, Սասունից էլ՝ Տիգրանակերտ (Դրոն, Անդրանիկը և Նազարբեկովը [Նազարբեկյան]) այս տեղի է ունեցել ժողովի ժամանակ, իսկ ժողովից հետո հրաման եղավ, որ նահանջել[54]: Նահանջում էին Ալջավազի կողմով: Հասան Բերկրիկալա: Այստեղ հեծելազորը թողին հետևապահ: Հետ նահան-ջելով հասանք Գյավրի Շամե: Ռուսաց զորքի հետ շարժվեցինք Բերկրիկալե և նոր հետ դարձանք Իգդիրով Երևան՝ Քանաքեռ: Հայրս եկած էր իմ հետևից, որ տուն դարձնե, իսկ ես, կամավոր լինելով, մերժեցի հորս:

1915 թ. օգոստոսին[55] Անդրանիկն իր կամավորական գնդով Վանից անցել էր Սորբի դիրքերը և պահանջել էր Դրոյից, որը գտնվում էր Շատախում, իր հեծելազորն ուղարկել իր տրամադրության տակ: Երբ հեռագիրն ստացանք, մեր վաշտի հրամանատար Խոսրովը (Դավալվեցի Դավիթ բեկի տղան) կարգադրեց մեկնել Սորբի դիրքերը, որտեղ գտնվում էր Անդրանիկի զորամասը: Հեծելազորի

Սակայն 1915 թ. հուլիսյան նահանջը հնարավորություն չտվեց իրականացնել Բաղեշի գրավումը:

[49] Պարսկաստանով վերադառնում են հայկական կամավորական III և IV խմբերը: Անդրանիկը նահանջում էր գեներալ Թ. Նազարբեկյանի ջոկատի հետ, որն ապահովում էր վասպուրականցիների նահանջի անվտանգությունը:

[50] ՀՅԴ-ի դրոշը:

[51] Ռոմանով Նիկոլայ Նիկոլաևիչ (Կրտսեր, 1856–1929) – ռուս պետական և ռազմական գործիչ, հեծելազորի գեներալ, ռուսական ցամաքային և ծովային ուժերի գերագույն գլխավոր հրամանատար (20. VII. 1914 – 23. VIII. 1915), Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար (23. VIII. 1915 – III. 1917):

[52] Գտնվում է Մուշի գավառի Ներքին Բուլանըղի շրջանում՝ Լիզ գետի ափին:

[53] Հայկական III և IV խմբերը, ծանր մարտեր մղելով, Վասպուրականից նահանջել են Հյուսիսային Պարսկաստան:

[54] 1915 թ. հուլիսի 13-ին Արծկեում գեներալ Թ. Նազարբեկյանը հրավիրում է իր ենթակա զորամասերի հրամանատարներին, այդ թվում՝ Հայկական I և II խմբի հրամանատարներ Անդրանիկին ու Դրոյին խորհրդակցության: Օրակարգում մեկ հարց էր՝ արդյո՞ք զինվորները երկարատև արշավից ու մարտերից հետո կկարողանան կատարել գիշերային նահանջ: Թ. Նազարբեկյանը վկայում է. «Դրոն ինձ պատասխանեց, որ չնայած դժվար է, սակայն եթե անհրաժեշտ է, ապա իր մարդիկ կդիմանան: Անդրանիկը ոչինչ չպատասխանեց. նա նստած էր խիստ մռայլված և ուժեղ ընկճված: Մնացած պետերը նույնպես համաձայնեցին նահանջել» [տե՛ս Ռ. Ս ա հ ա կ յ ա ն. Թվմաս Նազարբեկյանի անտիպ հուշերը, Տետր 4. 1915 թ. հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 14-ը. – «ՎԷմ» (Երևան), 2019, թիվ 4, էջ 279]:

[55] Հավանաբար՝ հունիսի վերջ կամ հուլիսի սկիզբ:

մեջ նաև ես էի: Մեկնեցինք Մոկս, որից հետո գնացինք Փութկի սուրբ Գևորգ վանքը[56], ուր մի գիշեր մնացինք և ապա առավոտյան վաղ ելանք սարի գլուխը. ձյունն այնքան քարացել էր, որ ձիերի ոտքի տակ չէր կոտրվում:

Այստեղից գնացինք Աղթամար վանքը՝ ծովի եզրին (կար նաև ծովի մեջ): Ապա հասանք Սորբի դիրքերը և այնտեղ էլ առաջին անգամ տեսա Անդրանիկին, որը մեզ հետ առանձին խոսակցություն ունեցավ և ասաց. «Սիրելի՛ եղբայրներ, դուք՝ յուրաքանչյուրդ, մի Անդրանիկ եք, եթե հերոսաբար կռվեք մեր դարավոր թշնամու դեմ: Մեր հայրենիքը ազատագրելու համար վաղը հարձակվելու ենք Խնձորիկի և Դատվանի վրա, դուք պետք է հերոսաբար կռվեք և ոչ մի երկյուղ չունենաք թշնամուց. նա մեր կամավորների և ռուս կոզակների անունը լսելիս լեղապատառ փախչում է»:

Հարձակվեցինք ու գրավեցինք Խնձորիկը և հասանք Դատվանին: Վանա ծովի մյուս ափից՝ Ալջավազի [Արծկե] կողմից առաջանում էր [էին] գեներալ Նազարբեկովի զորքերը:

2 ամիս հանգստանալուց հետո նորից հարձակվեցինք Մանազկերտով դեպի Խնուս: Վերցնելով [գրավելով] Խնուսը՝ հարձակվեցինք Ղարախաչի վրա, անցանք չերքեզական գյուղը՝ Զարբորխ[57], այնտեղից էլ՝ Սուլուխ:

Վրա է հասնում 1916 թ.: Մեր խումբը նորից մեկնեց ճակատ: Մանազկերտի բերդով իջանք Խնուս, ուր մեծ ճակատամարտ տեղի ունեցավ: Այդտեղ ռուսների հետ միասին սվինամարտով վերցրինք նրանց ամրությունները: Ստացվեց լուր, որ Էրզրումը վերցրած է[58]:

Մենք մեկնեցինք դեպի Սուլուխի կամուրջը[59]: Թուրքերը ոչ մի դիմադրություն չարեցին: Հաջորդ օրը ռազվեդչիկները[60] հայտնեցին, որ Մուշը դատարկ է[61]: Մենք մի քանի օր գնացինք Մուշ և մի քանի օր մնացինք այնտեղ: Ապա արշավեցինք Մուսա բեկի ալայի վրա: Մուսա բեկը փախավ Խութ: Վերադարձանք Քրդագոմ[62]: Այդ լեռներում շատ քրդի գյուղեր կային: Դրանց երիտասարդությունը ուզեցավ ճեղքել և անցնել Մուսա բեկի բանակը[63], բայց բոլորն էլ ջարդվեցին: Ձյունը բավական շատ էր, և հնարավորություն չկար առաջ շարժվելու:

Դրոյի բանակի մի մասը մնաց Մշո դաշտում, իսկ մեր՝ Դալի Ղազարի վաշտը գնաց Բիթլիսի ճանապարհը փակելու: Մնացինք շուրջ 10 օր. մթերքները ժամանակին չէր [չէին] հասնում, փոխադրական չկար, ձյան հսկայական շերտերի կույտեր կային: Ես և ընկերս՝ ուռուսը [ռուսը][64], գնացինք մի քրդի գյուղ՝ մթերք բերելու, բայց հաց չկար, միայն գլգիլ[65], ցորեն և գարի: Մեզ հետ

---

[56] Սորբում կար Սբ Գևորգ եկեղեցին: Բնակավայրից հյուսիս գտնվում էր Սորբի Ս. Կարապետի վանքը:

[57] Զարբոհր:

[58] Ռուսները Էրզրումը գրավել են 1916 թ. փետրվարի 3-ին:

[59] Գտնվում է Արածանիի վրա: Այն ունի 14 կամար:

[60] Հետախույզներ:

[61] Մուշը գրավվել է 1916 թ. փետրվարի 3-ին:

[62] Գտնվում է Մուշից մոտ 15 կմ արևելք՝ Մեղրագետի աջ ափին:

[63] Ջոկատը կամ գունդը:

[64] Հուշագիրը որևէ մանրամասներ չի հաղորդում հիշատակած անձի մասին:

[65] Կորեկի նման, բայց խոշոր հատերով հացաբույս:

վերցրինք մի հայ կին Սրսուռ [անունով] (այժմ նա բնակվում է Սույսզում՝ Ցամաքասար[66]), որին քյուրդը տարել էր կնության, իմ ընկերս՝ ուռուսը վերցրեց իրեն կնության ու հետը բերեց: Այդ ժամանակ Անդրանիկը Վանա կողմից եկավ մեզ մոտ, [և] Դալի Ղազարի հետ միասին մի սենյակում բնակվեց: Նա հայտնեց, որ ինչ միջոցով էլ լինի, այս գիշեր մենք պետք է անպատճառ Բիթլիսը գրավենք[67]: Կարգադրեց Ղազարին իր տղաներից 10 մարդ վերցնել ու առաջ շարժվել: Ես էլ այդ 10 տղաներից մեկն էի: Գիշերվա ժամը երկուսին Նազարբեկովի մի ատրիադի[68] հետ Անդրանիկը մտավ Բիթլիս: Անդրանիկը ծանոթ էր բոլոր դիրքերին, զորքերի բոլոր կուտակումներին: Երբ մենք սկսեցինք ռմբակոծել քնած զորքերի դիրքերը, նրանք քնաթաթախ փախչում էին այս ու այն կողմ, երբեմն էլ՝ նույնիսկ, իրար վրա կրակում: Տեղի թուրք-քուրդ բնակչությունը, գլուխը կորցրած, այս ու այն կողմ էր փախչում: Դրանցից շատերը կոտորվեցին, իսկ առավոտյան դաղարեցվեց կոտորածը: Տեղի հայ ժողովրդին, բոլորին կոտորել էին, և ոչ ոքի չտեսանք քաղաքում: Հեռախոսագիր ստացվեց, որ Սև սարի ուղղությամբ եղած ռուս կոզակներին թուրքերը շրջապատել ու կոտորել էին: Պատմում էին, որ կոզակներին սպանել և ապա կողքերը ճեղքելով՝ գրպաններ էին բացել և նրանց ձեռքերը դրել էին մեջը ու կանգնեցրել էին պատերի կողքին:

Մեր խումբը մեկնեց Սև սար (Նեմրութ–Գրգուռ սարերի). կողքով մաքրեցինք քրդական գյուղերը, որպեսզի ճանապարհները վտանգի չենթարկվեին: Այսպիսով՝ եկանք Ցրոնք: Ցրոնքում իմ ընկեր ուռուսը ցույց տվեց այն տունը, որտեղ հայերին՝ ծեր ու մանուկ, հավաքել էին ու սպանել և ապա վառել էին: Նա ասաց, որ ինքն էլ դրանց մեջն էր եղել, բայց մի կերպ երդիկից դուրս էր եկել, փախել և ազատվել էր: Ցրոնքից վերադարձանք Մուշ: Մեզ ուղարկեցին Ղզլաղաճ գյուղ՝ պոստ պահելու: Այդ տեղից մոտ էր Կուրտիկ սարը: Երկու ամիս դիրքեր պահեցինք մինչև 1916 թ. ապրիլը: Ապրիլի 10-ին հարձակման գնացինք Արտիշեն, որը հիշվում է [նաև որպես] Գենջ, [որը] փոքր քաղաք է: Այնտեղ շրեշ[69] էինք քաղում, ձավար էինք ճարել, որը խառնում ու ճաշ էինք պատրաստում ու դրանով կերակրվում: Փոխադրականը չէր հասնում: Ապա սկսեցինք հարձակվել Շենք[70], Սեմալ, Դրլլք[71] գյուղերի վրա, որտեղ թուրքական զորքերը մեզ ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս: Մենք էլ, քչվոր լինելով, ետ դարձանք նորից Ղզլաղաճ: Այդ ժամանակ էլ լսեցինք, որ Քեռին Ռևանդուզում սպանվել է[72]: Դա մեզ համար մեծ սուգ էր:

1916 թ. ես անցա Դալի Ղազարի վաշտը, մեր կամանդան էլ անցավ հետևակային: Երբ հասանք Մուշ, բնակչությունը՝ հայ, թուրք, քուրդ, մնացել էին հպատակ:

---

[66] *Գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում:*

[67] *Բիթլիսը գրավվել է 1916 թ. փետրվարի 18-ի լույս 19-ի գիշերը:*

[68] *Ջոկատի:*

[69] *Շուշանազգիների ընտանիքին պատկանող կոճղարմատավոր բույս, որը գործածվում է իբրև բանջար:*

[70] *Գտնվում է Մուշի գավառում՝ Կարմրակ վանքի մոտ:*

[71] *Դրլլք. գտնվում է Մուշի գավառում:*

[72] *Զոհվել է 1916 թ. մայիսի 15-ին:*

Մեզ տարան Խազ գյուղը: Ձմեռ էր, որտեղից պատերազմեցինք քրդական Մուսա բեկի [նստավայր հանդիսացող բնակավայրի] վրա: Գյուղը քարուքանդ արինք, իսկ բնակիչների մի մասը, որոնք ազատվել էին, փախչել [փախել] էին [էր] Խութ: Մենք հաջորդ գյուղը՝ Քրդագոմ անցանք, այնտեղից էլ՝ Նեմրութ և Գրգուռ սարը՝ Բիթլիսի ճանապարհի վրա: Մի շաբաթ դիրք պահելուց հետո Անդրանիկն ու Նազարբեկովը Վանի կողմից եկան, հասան: Մնացել էինք [էր] մեր վաշտը մենակ: Ես մի քանի տղաների և [Դալի] Ղազարի հետ անցանք Անդրանիկի մոտ: Գիշերը հարձակվեցինք և միևնույն[73] մեր վաշտի համար հաց վերցրինք ու եկանք հետ: 2–3 օր հետո մեզ հետ դարձրին այդ գյուղը, որտեղից էլ Սև սարով հարձակվեցինք քրդերի վրա Նազարբեկովի և Անդրանիկի հրամանով: Սև սարով անցանք Ցրոմպ[74], այստեղ գիշերելուց հետո շարժվեցինք Մուշ, այստեղից էլ՝ Ղզլաղաջ[75] գյուղը: 2–3 ամիս դիրք պաշտպանելուց մինչև [1916 թ.] ապրիլի 15-ը, նրանից [որից] հետո սկսվեց ուժեղ ճակատամարտ թուրքերի հետ: Պատերազմելով անցանք Արդշում[76] և տևեց կռիվը մինչև [ապրիլի] 23-ը և դադարեց, որտեղից նորից ետ եկանք Ղզլաղաջ: Այստեղից հարձակման անցանք նույն սարի՝ Ոզմա գեղուվի վրա՝ Շենիկ-Սեմալի դիմաց:

[1916 թ.] ապրիլի 23-ին ռուս բանակի հետ միասին հարձակում գործեցինք Ղոզմա (Ոզմա) գետուկի վրա, ուր թուրքաց զորքը մեծ ամրություն էր պատրաստել: Ես զվոդով [դասակով] առաջ շարժվեցի, և դիրքերից մեկը վերցրինք: Սկսվեց ընդհանուր հարձակումը. թուրքը նահանջեց և դրավեցինք նրանց ամրությունները: Այդտեղ մենք ունեցանք մի քանի սպանված ու վիրավորներ: Մեր տղաներից մեկը՝ ղարաբաղցի, ծանր վիրավորվեց: Ես վերցրի նրան ու բերեցի իմ խմբապետ Դալի Ղազարի մոտ: Վիրավորն ասաց, որ թող ինձ Թարփոշյանը տեղափոխի, բայց հրամանատարն ասաց, որ սա չի ապրելու, դու պատրոն [փամփուշտ] հասցրու զինվորներին:

1916 թ. ապրիլի 23-ին ես վիրավորվեցի այդ սարում: Ես ընկել էի մահամերձ վիճակում: Տղաները, կարծելով, որ ես մահացել եմ, թողնում ու փախչում են և հայտնում հրամանատարին իմ մահվան մասին: Բայց Դալի Ղազարը կարգադրում է գնալ և դիակը բերել, որպեսզի թուրքերի ձեռքը չանցնի: Երբ աչքերս բացեցի, տեսնեմ թուրքերը, վերևից «սալավաթ» («կեցցե» – Ռ. Ս.) տալով (գոռալով – Ռ. Ս.), առաջ են շարժվում, իսկ մեր տղաները սկսեցին հակահարձակումը: Թուրքերը փախան, մեր տղաներից Գուրգենը (Վերին Ախտեցի) ու պոլսեցի Իբիշ անունով մեր խմբից ինձ վերցրին ու բերին բժշկի մոտ: Բժիշկը բաքվեցի հայ էր: Նա ասաց, թե ի՞նչու եք սրան բերել, սա մեռնելու է: Ես, ուժերս հավաքելով, ասացի. «Բժի՛շկ, վերքս կապիր, ինձ բան չի լինի»: Վերքս ծանր էր և ինձ բերին Ղզլաղաջ: Սկսեցին բուժել, մի քանի օրից բերեցին Զարբոր: Այստեղ էլ մի քանի օր պահելուց ու բուժելուց հետո այստեղ եկավ Դրոն, ասաց, թե զինվորս ծանր վերք ունի, ֆայտոն[77] կուղարկեմ՝ նրան փոխադրելու համար: Մեկ շաբաթ հետո, մի քիչ թեթևանալուց հետո[78] ինձ տարան Մուշ, այնտեղից

---

[73] *Այդպես է փաստաթղթում:*

[74] *Նկատի ունի Մուշից 15 կմ հյուսիս-արևելք գտնվող Ցրոնք գյուղը:*

[75] *Կզլլաղաջ:*

[76] *Հավանաբար՝ Արտոնք. գտնվում է Մուշի գավառում:*

[77] *Կառք:*

[78] *Փոքր ինչ կազդուրվելուց հետո:*

էլ խնուս – Ալաշկերտ[79] – Իգդիր: Իգդիրում ավելի ծանրացավ վիճակս՝ ձախ կողմից թիակի վրայից անցել էր գնդակը, դուրս եկել կրծքովս՝ սրտից քիչ վերև:

Խնուսում ինձ պարգևատրեցին [Գեորգիևյան] խաչով ու [Գեորգիևյան] մեդալով, որ տվել էր Դրոն ու գեներալը[80]: Ինձ տեղափոխեցին բուժվելու Թիֆլիս[81]: Մեկ ամիս հետո տեղափոխեցին Գորի: 2 ամիս մնալուց հետո քիչ լավացա, կամիսիայի գցեցին[82] ու ինձ 3 ամսով արձակուրդ ուղարկեցին տուն:

Տանը մեկ ամիս մնալուց հետո ինձ նորից կանչեցին[83] բանակ՝ Երևանում, որտեղ միացա Դալի Ղազարի վաշտի [վաշտին] և անցանք Պարսկաստան՝ մինչև Շարաբխանա[84]: [1917 թ. վերջին] ռուսական բանակները հետ էին քաշվում, ամեն ինչ (նյութական – տեխնիկական) սարքերը թողնում էին տեղում: Այնտեղից էլ ֆուրգոններով[85]ու ձիերով գինամթերք բերինք Նախիջևանի և Երևանի մեջտեղում[86]: Ճանապարհը փակ էր թուրքերի միջոցով[87]:

Ապա վերակազմավորվելով՝ մեր խումբը [1918 թ. փետրվարին] ուղարկեցին Սարիղամիշի ֆրոնտ[88]՝ Անդրանիկին օգնության: Մինչև մեր գնալ, հասնելը, Անդրանիկը արդեն թողել էր Էրզրումը: Մենք իրար հանդիպեցինք Ղարայորդանի[89] մոտ:

Անդրանիկը Ղազարին ասաց, որ պետք է հետ դառնալ այնտեղ, որտեղ կան քաջ կռվող հայեր, այնտեղ էլ կան դավաճաններ, եթե իմ հետևից որ գնդակ խփեն, ապա այսպիսի հայերի համար արժանի չի կռվել[90]: *Այստեղից նահանջեցինք, հասանք Լենինական: Այստեղ խմբերը ցրվեցին, ես եկա տուն: Հայրս և մայրս ինձ տեսնելով, շատ ուրախացան:*

Մնացածներն էլ բատալյոն[91] կազմեցին, ետ վերադարձա բատալյոն և որպես [Գեորգիևյան] մեդալ ունեցողի՝ ուղարկեցին Հասան Ղալե[92]՝ պլեններին[93] վրա հսկելու[94]:

---

[79] *Ղարաքիլիսա:*

[80] *Հավանաբար՝ Թ. Նազարբեկյանը:*

[81] *Արամովների հիվանդանոց:*

[82] *Բժշկական հանձնաժողովի քննության ուղարկեցին:*

[83] *Հրամայել էր Դալի Ղազարը:*

[84] *Շարապխանե:*

[85] *Բեռնասայլ:*

[86] *Այսինքն՝ Երևանի ու Նախիջևանի միջև ընկած տարածքում: Վայրը նշված չէ:*

[87] *Ճանապարհն արգելափակել էին տեղի թուրքերը:*

[88] *Ռազմաճակատ:*

[89] *Կարաուրգան:*

[90] *Հուշերի մեքենագիր մասում հետևյալ կերպ է շարադրված. «Անդրանիկն ասաց. «Ղազար ջան, մի տեղ, որ ինձ վրա մերոնք հրացան արձակեն, էլ ի՞նչ ես սպասում, հետ դարձեք, գնանք: Սկսվեց գաղթը»»:*

[91] *Գումարտակ:*

[92] *Հասանկալա:*

[93] *Ռազմագերիների:*

[94] *Հուշերի ձեռագիր մասում ավելացված է. «Դրանից հետո իմացա, որ Անդրանիկը գնացել է Պարսկաստան, նրա առաջ թուրքերը կտրել էին Խոյ քաղաքի մոտ: Տեղի էր ունեցել մեծ ճակատամարտ և նա հետ էր վերադարձել Նախիջևան»:*

Մի քանի ժամանակ հետո՝ 1917 թ-ին, սկսվեց ռևոլուցիան[95]: Սկսվեց մեր զորքերի ցրվելը[96], քայքայվելն ու քոչելը: 1920 թ.[97] մտա Պերվի կոննի պոլկը[98]: Մեր պոլկը 1920 թ. հանձնեցին բոլշևիկների տրամադրության տակ Հոկտեմբերյան կայարանում: Ես ծառայեցի պոլկում մինչև 1921 թիվը[99]:

1921 թ-ին մենք Ներքին Ախտայում[100] էինք: Այդ ժամանակ սկսվեց ռևոլուցիան Վրաստանում[101] և պայքար բոլշևիկների ու մենշևիկների միջև: Մեզ ուղարկեցին Ռնդամալով[102] Կիրովական[103], և հարձակում գործեցինք Դվալի սարից մինչև Գյառգյառ՝ վրաց մենշևիկների դեմ: Գյառգյառից շարժվեցինք կռիվներով դեպի Մանգլիս, այդտեղից էլ Բելի Թուքան[104], որտեղ մեզ հետ էին [էր] ռուսական պերվի կոննի պոլկը: Այս գյուղերով անցանք Կոջոռը[105], որտեղից էլ՝ Թիֆլիս[106]: Թիֆլիսում մի քանի օր մնալուց հետո հարձակում գործեցինք Գորիի վրա, այստեղ [որը] գրավելուց հետո մի 2 օր հետո շարժվեցինք Կաբելի[107], որտեղ մնացինք մեկ ամիս: Վրաց մենշևիկները հանձնվեցին, և այսպես ազատագրեցինք Վրաստանը:

Մեկ ամիս հետո մենք վերադարձանք Զանգեզուր Նժդեհի ավանտյուրայի[108] դեմը, այնտեղ էլ ազատագրեցինք ...[109], Բռնակոթ, Անգեղակոթ, Դարբաս, Ղարաքիլիսի գյուղերը: Այստեղ մի քանի ամիս [մնալուց] հետո նորից եկանք Երևան:

1921 թ.[110] Գրիգոր Ղազարյանը[111] ինձ, որպես մեծահասակի, ազատեց[112] պոլկից: Վերադարձա գյուղ: Այստեղ հարազատներիս տեսնելուց հետո գնացի

---

[95] *Հավանաբար՝ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը:*

[96] *Դասալքությունը:*

[97] *Հուշագրի կողմից ջնջվել է հետևյալ նախադասությունը. «Հարձակում գործեցինք Վրաստանի [վրա]»: Նկատի ունի 1918 թ. վերջի հայ-վրացական պատերազմը:*

[98] *Առաջին հեծյալ գունդը:*

[99] *1922 թ.:*

[100] *Այժմ՝ Հրազդան:*

[101] *Տեղի է ունեցել 1921 թ. փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը:*

[102] *Այժմ՝ Ջրառատ:*

[103] *Մեծ Ղարաքիլիսա, այժմ՝ Վանաձոր:*

[104] *Հավանաբար՝ Բելի Կլյուչ: Այժմ՝ Թեթրի Ծղարո:*

[105] *Կոդոր:*

[106] *11-րդ կարմիր բանակի զորամասերը Թիֆլիս են մտել 1921 թ. փետրվարի 25-ին:*

[107] *Հավանաբար՝ Կոբուլեթի:*

[108] *Արկածախնդրության: Հուշագիրը օգտագործել է «ավանտյուրա» եզրույթը, որով պիտակում էին խորհրդային տարիներին Գ. Նժդեհի գլխավորած Սյունիքի ազատագրական շարժումը:*

[109] *Ընթեռնելի չէ:*

[110] *1922 թ.:*

[111] *Անձի ինքնությունը չհաջողվեց պարզել:*

[112] *Զորացրեց:*

Երևան և 1922 թ-ի ապրիլի 1-ից աշխատեցի [որպես] կրտսեր միլիցիոներ[113]: Մի տարի ծառայելուց հետո գնացի Լենինական ու ծառայեցի դամոժնում[114] 2–3 տարի: Հետո Լենինականից տեղափոխվեցի նորից գյուղ: 1932 թ. ընդունվեցի կոլխոզ[115]: Մինչև 1944 թ. գյուղում եմ աշխատել, իսկ [19]44 թ-ից հետո Ալագյազի ջրային տնտեսությունում եմ աշխատել թունելի բացմանը մինչև 5 տարի …[116] եկչիկ: Ընտանիքս տեղափոխել եմ Արագած և բնակվում եմ [19]53 թ-ից Արագածի այգեգործական սովխոզում[117]:

ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 15, թ. 1–17: Բնագիր: Մեքենագիր-ինքնագիր:

---

[113] *Միլիցիայի շարքային անձնակազմի համար 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո սահմանվել էր երկու կոչում՝ կրտսեր և ավագ:*

[114] *Մաքսատուն:*

[115] *Կոլեկտիվ տնտեսություն:*

[116] *Ընթեռնելի չէ:*

[117] *Խորհրդային տնտեսությունում:*